ԱՆՑՈՐԴԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ)

Գրեց՝ ՀՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ՍԵՒԱՆ

— Եւ դարունը, լոյսերով ողահաւորուած, արծաթէ իր սուրերը զարնում է ժայռերին: Երկիրը հայոց, բո՛ց է ճերմակ...

— Բնական է: Ձմեռը Հայաստանի ճանապարհների մեծ մասը փակ են: Լեռների վրայ գիւղեր կան, որոնք վեց ամիս աշխարհից մեկնում են կտրուած, հսկայ ձիւների կուտակումների եռեւ թաղնուած... Ի՞նչ կեանք կարող է լինել· մրրիկը ման է գալիս տանիքների վրայ:

— Այո՛, երկու նոր Fiat–ներ: Գեղեցիկ, արագընթաց՝ ժամը առնուազն 120 կիլոմետր՝ եւ անձայն: Հին մեքենաներից կամաց–կամաց ազատագրուում ենք: 12,000 ռուբլի ամէն մէկը: Շատ հաճելի է· նեռի նման են վազում:

— Նշենիների խարոյկների չուրջը բալան բալան սրսրփող:

— Ծխնելոյզների մէջ վայում է, խենթացած թռչունի նման գլուխը զարնում է լեռներին, գլոր գալիս ձորերի մէջ, սրընթաց վար նետուում եւ արիւնած կուրծքը քսում դաչտերին: Իսկ ձիւնը պատմում է իր ամեհի հէքեաթը: Գիւղը արջի որջ է, թաթերը կրծքի տակ սեղմած՝ մրափում է: Մրափո՞ւմ է՝ այնքան էլ չէ: Աբուսաքին աշխարհից կտրուած՝ ի՛նչ բախտ՝ գիւղը վերջապէս սկսում է ապրել իր կեանքով· զարերի տակ պատսպարուած այն կեանքով, որը միանգամայն յոյս է եւ խորհուրդ:

Կառավարութիւնը ապագայում բոլոր հիմնարկութիւնները պիտի օժտէ այդպիսի ինքնաշարժներով: Առայժմ մէկը կենդրօնկոմի ձեռքն է եւ միւսը Կ.Կ–ի: Կամաց կամաց, թանգ է... Հարցը նրանում է, որ այդ ընկերները, չափազանց նախանձախնդիր, չեն ուզում դոնէ մի օրով զիջել ինքնաշարժը... Սեփականատիրական սարօրինակ մտայնութիւն է որ...

— Լոյս է եւ խորհուրդ: Աբուսքին կեանքի առջեւ անանցնելի սահմաններ են քաշուած, եւ որովհետեւ այդ սահմաններից այն կողմը անյայտն է, անորոշը եւ առեղծուածը, մարդիկ ապրում են ինքնամփոփուած կեանքով, մէկը միւսին սեղմուած, մեծ մի ընտանիքի նման: Ամենօրեայ լինելիութեան ամենափոքրիկ դէպքը ուրոյն նշանակութիւն է ստանում: Անցեալը վերապրում է նոր, ներուժ կեանքով, եւ հէքեաթը, լքելով իր ոսկէ թեւերը, դառնում է միանգամայն գիտական իրականութիւն: Թանձր եւ մխապաղպ այդ չղարչի տակ տեղադրա երեւակայութիւնները եռում են մեծ ճնշումի կաթսաների նման: Երեկոները, երբ մօտակայ լերան կատարին, բիւրեղը սուզւում է խորհիր լճի մէջ...

— Ինձ համար միանգամայն մնում է անհասկանալի: Քանի անգամ ասել եմ, Թողէք, որ մեր մտաւորականներից դոնէ նրանք, որ արտասահմանից են եկել, դնան երկիրը տեսնեն, ծանօթանան հայ իրականութեան հետ, հայ գիւղացու հետ: Ո՞ւմն ես ասում...

— Իսկապէս, օտար երկիր եկած հիւրի նման եմ: Երեւանից չենք կարողանում դուրս գալ· եթէ դուրս էլ դնանք, կասկածով նայում են, թէ ո՞ւր դնաց, ինչո՞ւ դնաց: Գիտէք էլի...

— Գիտեմ, եղբայր, դիտե՛մ: Բայց մենք պատասխանատու գործիչներս ձեղանից աւելի լաւ դրութեան մէջ չենք գտնուում· դուցէ աւելի վատ: Փոքրիկ այդ ճանճերը լրտեսում են, բամբասում... Աբուսահմանում, երբ առաջին անգամ մօտս եկաք, եւ ձեզ նախազգուշացրի...

— Գիւղի մինակեաց զանգակը չուսուսիկթ անցնող ճամապարհների եռեւից սկսում է զօղանջել: Այդ բարձրութեան վրայ, լերան այդ կատարին, զանգակի մինակեաց այդ ձա՛յնը·ու կուրծքը ճիւնախառն քամին տուած չինակատը՝ երկու քայլ առաջ մի քայլ յետ՝ չուսուսում է եկեղեցի, հարեւանների հետ կատակ անելով եւ մրրիկի հետ խօսելով: Զկայ աւելի

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան